Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2018 թվականի մարտի 19-ի
N 38 -Ա որոշման

ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային
ՀԱՅՏ

Ծրագրի անվանումը	Կոմունալ ծառայության և աղբահանության ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերում:
Մարզ	Շիրակ
Համայնքը /համայնքները	Գյումրի
Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից	*125 կմ*
Սահմանամերձ , բարձր լեռնային համայնք	
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Գյումրի քաղաքը զբաղեցնում է 4400 հա տարածք: Քաղաքում կա 250 փողոց, որոնց ընդհանուր երկարությունը 181 կմ է իսկ ընդհանուր մակերեսը 2,2 մլն քառ. մ: Փողոցներից 90-ը՝84,3 կմ երկարությամբ և 1,11 մլն քառ. մ մակերեսով, ասֆալտապատ են, իսկ 160-ը՝ 96,7 կմ երկարությամբ և 1,09 մլն. քառ. մ մակերեսով, ոչ ասֆալտապատ: Համայնքում կա 12 հրապարակ՝ 75600 քառ. մ ընդհանուր մակերեսով: Համայնքապետարանի առկա հատուկ ավտոտրանսպորտային միջոցների ընդհանուր քանակով հնարավոր է մաքրել ընդամենը 800,000 քառ.մ ասֆալտապատ մակերես: Համայնքում ապրիլ ամսից կմեկնարկի ՎԶԵԲ ֆինանսավորմամբ իրականացվող «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրով նախատեսված փողոցաշինության աշխատանքները, որն իր մեջ ներառում է 12 փողոցի և 3 հրապարակի հիմնանորոգում: Հիմնանորոգման արդյունքում 3 ոչ ասֆալտապատ փողոց 2377 մ երկարությամբ կդառնա ասֆալտապատ և կմեծացնի մաքրման կարիք ունեցող փողոցների մակերեսը: Առկա ինքնաթափ մեքենաները օգտագործվում են թե՛ կոմունալ, թե՛ աղբահանության աշխատանքների ժամանակ: Սա պայմանավորված է առկա քանակի ոչ բավարար լինելու հանգամանքով: Հատկապես ձմռանը, երբ ինքնաթափ մեքենաները օգտագործվում են փողոցները և հրապարակները աղով և ավազով մաքրելու նպատակով: Ինքնաթափերի քանակի պակասի պատճառով հնարավոր չէ վերը նշված աշխատանքները ամբողջ քաղաքի տարածքում կատարել միաժամանակ: Վերոնշյալ խնդիրների լուծումը հնարավոր չէ լիարժեք իրականացնել համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հատուկ ավտոմեքենաների քանակով: Համայնքում կա ընդամենը 14 աղբատար և 4

	ինքնաթափ մեքենաներ: Այս մեքենաներից 7-ը 80-ական թվականների արտադրության մեքենաներ են, որոնք վաղուց սպառել են իրենց ռեսուրսը, 1ինքնաթափը 2007թ. է, իսկ մնացած 10 մեքենաները՝ 2012թ, որոնք աշխատելով առավելագույն ծանրաբեռնվածությամբ՝ դարձել են գրեթե անպիտան:
Ծրագրի իրականացման նպատակը	Չնայած այն հանգամանքին, որ Գյումրին Հանրապետության երկրորդ քաղաքն է, որտեղ ապրում են շուրջ 115000 բնակիչ, Գյումրին նաև մշակութային մայրաքաղաք է: Գյումրի քաղաքի պատմամշակութային ժառանգություն հանդիսացող, քաղաքի կենտրոնական ողջ հատվածը՝ «Կումայրի» արգելոց - թանգարանը, Գյումրու արհեստներն ու արվեստը, սպորտը և մշակույթը Գյումրին դարձնում են տուրիստական հետաքրքրություն առաջացնող կենտրոն: Սակայն, վերոնշյալ պոտենցիալը և ավանդական Գյումրու գեղեցկությունը հավասարվում է զրոի, եթե չունենք մաքուր փողոցներ, խնամված կանաչապատ տարածքներ, դատարկ աղբամաններ և այլն: Սույն ծրագրով նախատեսվում է ձեռք բերել 3 աղբատար և 2 ինքնաթափ ավտոմեքենաներ: Ձեռք բերելով վերը նշված հատուկ տեխնիկան կհամալրի համայնքի ավտոտրանսպորտային տնտեսությունը, որը իր դրական արդյունքը կթողնի քաղաքում ավելի մեծ մակերես մաքրելու, բարեկարգելու, քաղաքը փոշուց ազատելու և մնացած այլ հարցերում: Ավտոմեքենաների քանակի ավելացմամբ պակասեցնել առկա ավտոմեքենաների ծանրաբեռնվածությունը, որի շնորհիվ կփոքրանա ավտոմեքենաների հետագա մաշվածության չափը և կերկարի շահագործման ժամկետը:
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում	Ծրագրի իրականացման ընթացքում, ավտոմեքենաների գնումների գործընթացի կազմակերպման արդյունքում ձևավորված վերջնական արժեքի չափով կավելանա համայնքին պատկանող հատուկ տեխնիկատրանսպորտային միջոցների հաշվեկշռային արժեքը:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրա-կանացման նպատակին	Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի ավտոտրանսպորտային տնտեսությունը կհամալրվի առնվազն 5 նոր ավտոտրանսպորտային միջոցներով: Ունենալ մաքրվող փողոցների ավելի մեծ ընդհանուր մակերեսը: Ավելի արագ և ժամանակին իրականացնել կոմունալ և աղբահանության աշխատանքները:
Ծրագրի յուրաքանչյուր արդյունքի հասնելու համար անհրաժեշտ	1. Գնումների գործընթացի կազմակերպում 2. Արդյունքների ամփոփում, պայմանագրերի կնքում 3. Ավտոտրանսպորտային միջոցների տեղափոխում Գյումրի և համապատասխան ֆինանսական միջոցների փոխանցում

միջոցառումները	
Ծրագրի ազդեցությունը շահառուների վրա	Ծրագրի շահառուներն են՝ 1. Հայաստանի Հանրապետությունը՝ ունենալով մաքրությամբ և կանաչապատ տարածքներով աչքի ընկնող երկրորդ խոշոր քաղաքը 2. Գյումրի համայնքի ողջ բնակչությունը և հյուրերը:
Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր	Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ստեղծել 20 հիմնական աշխատատեղ:
Ծրագրի սպասվող միջնաժամկետ և երկարաժամկետ արդյունքները	Ծրագրի իրականացման արդյունքում զգալիորեն կավելանա Գյումրի համայնքի մաքրվող տարածքի մակերեսը: Ձմեռային աշխատանքների ժամանակ հնարավորություն կստեղծվի փողոցների աղով և ավազով մշակման աշխատանքները կազմակերպել միաժամանակ, որը կընդգրկի ավելի մեծ տարածք: Աղբահանության աշխատանքները կիրականացվեն ավելի արագ և արդյունավետ: Կնվազի առկա ավտոմեքենաների ծանրաբեռնվածության մակարդակը, որի արդյունքում կփոքրանա նաև հետագա մաշվածության չափը:
Համայնքի 2017 թվականի բյուջեն և բյուջեի կատարողականը	

	Պլան	Ծախսեր
Վարչական	3 089 058 948	2 979 851 253
Ֆոնդային	249 558 300	205 132 498

2017 թ. Գյումրի համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը

		Պլան	Ծախսեր
- Շենքերի և շինությունների կառուցում	5112	1740000	1479000
- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	203583300	177423278
- Տրանսպորտային սարքավորումներ	5121	10000000	0
- Վարչական սարքավորումներ	5122	15800000	14117040
- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	13135000	8888180
-Աճեցվող ակտիվներ	5131	2000000	1920000
- Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	750000	750000
- Նախագծահետազոտական ծախսեր	5134	2550000	555000

Համայնքի 2018 թվականի բյուջեն

3357033700 ՀՀ դրամ

Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի պլանավորված ծախսերը՝

Վարչական	3187370200
Ֆոնդային	242770300

2018 թ. Գյումրի համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը

		Պլան
- Շենքերի և շինությունների կառուցում	5112	1740000
- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	195835300
- Վարչական սարքավորումներ	5122	6450000
- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	35375000
-Աճեցվող ակտիվներ	5131	2120000
- Նախագծահետազոտական ծախսեր	5134	1250000

Գյումրի համայնքի ֆոնդային մուտքերի պլան՝ 73106800

Համայնքի 2018 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով 2018 թվականի կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով

Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի մուտքերի հաշվին սույն ծրագրի իրականացումը հնարավոր չէ: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների շուրջ 98%-ը ուղղվում է համայնքի պարտադիր խնդիրների իրականացմանը:

Ֆինանսական միջոցների մնացած մոտ 2%-ն էլ ուղղված է համայնքի կամավոր խնդիրների լուծմանը, որով փորձ է արվում ինչ-որ չափով մեղմելու համայնքի կարիքավոր և սոցիալապես խիստ անապահով բնակչության հոգսերը:

Ծրագրի ընդհանուր բյուջեն

133371000 ՀՀ դրամ (100%)

Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը

93359700 ՀՀ դրամ (70 %)

Այլ ներդրողներ

0ՀՀ դրամ (0 %), նշել ներդրողի անունը:

Ծրագրի իրականացման տևողությունը	Ակիզբ__մայիս____2018թ. Տևողությունը՝ 3 ամիս
Ծրագրի ծախսերը	Ծրագրի արժեքը հաշվարկվել է «ԿԱՄԱՋ ՀԱՅԱՍՏԱՆ» կազմակերպության կողմից տրամադրված տեխնիկական բնութագրերի և ֆինանսական գնահարցումների արդյունքում:
Ամսաթիվ	"__21__"___03_____2018թ.

Այլ տեղեկություններ ծրագրի մասին. *(Նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):*

Համայնքի տնտեսական պատասխանատու Կարեն Բադալյան
Հեռախոս, էլ. Փոստ 94 90-90-41, badalyan.karen74@gmail.com

_____ Սամվել Բալասանյան _____
Համայնքի ղեկավար _____

ԿՏ.